

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

2024-2025թթ. ուսումնական տարվա ճարատարապետության հոսքի
ընդունելության «Մաթեմատիկա» առարկայից գիտելիքների ստուգման տոմսի
նմուշ

1. /1.5 միավոր/ Կրճատել կոտորակը.

$$\frac{6a^3 + 6b^3}{3a + 3b} :$$

2. /2 միավոր/ Երկրաչափական պրոգրեսիայում $b_2 = 6$, $b_4 = 54$, ընդ որում՝ $q < 0$: Գտնել b_6 -ը:

3. /3 միավոր/ Լուծել անհավասարումը.

$$\frac{16 - x^2}{x^2 - 5x - 6} < 0 :$$

4. /2.5 միավոր/ Լուծել հավասարումների համակարգը.

$$\begin{cases} x^2 + y^2 - 6y = 0 \\ y + 2x = 0 \end{cases} :$$

5. /2.5 միավոր/ Լուծել հավասարումը.

$$\sqrt{2x+3} = \sqrt{3-x} :$$

6. /3 միավոր/ Ապրանքի գինը երկու անգամ նույն տոկոսով իջեցնելուց հետո 300 դրամից դարձավ 192 դրամ: Ամեն անգամ քանի՞ տոկոսով իջեցրին ապրանքի գինը:

7. /2.5 միավոր/ ABC եռանկյանը արտագծված է շրջանագիծ: Գտնել այդ շրջանագծի շառավիղը, եթե $AC = 24$ սմ, $\angle A = 60^\circ$ և $\angle B = 30^\circ$:

8. /3 միավոր/ $ABCD$ շեղանկյան կողմը 6սմ է, իսկ $\angle BAD = 60^\circ$: BC կողմի վրա E կետը վերցրված է այնպես, որ $CE = 2$ սմ: Գտնել E կետի հեռավորությունը շեղանկյան անկյունագծերի հատման կետից: